AURORA
HUMANITARIAN INITIATIVE

Փետրվարի 3, 2026 թ.

Բարի գալուստ 2026 թ. «Երախտագիտությունն՝ ի գործ» տեղեկատվական առաջին հավելված: Մինչ աշխարհը դիմակայում է մարդասիրական ճգնաժամերին, որոնք ավելի ու ավելի են խորանում, «Ավրորան» շարունակում է մարդասիրության առանցքում պահել մարդուն եւ բացահայտել մարդասիրությունը յուրաքանչյուրի մեջ: Միացեք ինձ, եւ եկեք միասին հասկանանք, թե ինչպես է դա իրագործվում:

Մարդը՝ մարդասիրության առանցքում...

«Ավրորա» մրցանակի երկրորդ դափնեկիր, բժիշկ Թոմ Քաթինան շարունակում է իր աշխատանքը «Գթության մայր» հիվանդանոցում Սուդանի Նուբայի լեռներում, որն այս պահին երկրում գործող սակավաթիվ առողջապահական հաստատություններից մեկն է: Այն միակն է Նուբայի շրջանում եւ Սուդանի մեծ մասում, որտեղ քաղցկեղի բուժում են տրամադրում:

Բժիշկ Քաթինայի նման մարդասերների աշխատանքը ոգեշնչման աղբյուր է դարձել «Ավրորա» հետազոտական դրամաշնորհների համար: Մեր այս նոր նախագիծը բացահայտում է աշխարհի ամենաբարդ հատվածներում, ինչպես օրինակ՝ Սուդանում, Գազայում եւ Ուկրաինայում, համայնքի ներսում աշխատող մարդասիրական գործիչներին եւ նրանց կատարած աշխատանքը: Երբ օգնություն տրամադրող միջազգային կազմակերպությունները նահանջում են, իսկ ֆինանսավորումը կրճատվում է, համայնքի խնամքի ամբողջ բեռն ընկնում է հենց տեղում գործող մարդկանց վրա:

Սակայն այս պայմանները հուսահատություն առաջացնելու փոխարեն ձեւավորում են դիմացկունություն եւ ստեղծարար մոտեցում՝ մարդասիրական աշխատանքում: «Ավրորա» հետազոտական դրամաշնորհների ծրագիրն ստեղծվել է այս մարդասերների աշխատանքն առաջ մղելու համար՝ նրանց թեկնածությունն առաջադրելով «Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակին, որը ենթադրում է 1 միլիոն ԱՄՆ դոլար պարգեւ: Մեր գործընկերների թվում են Բրաունի համալսարանը, Դյուքի համալսարանը, Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանը եւ շատ այլ հեղինակավոր հաստատություններ:

Միացեք մեր ջանքերին: Հայտերը վերանայվում են շարունակական հիմունքներով: Տեղերը սահմանափակ են:

ԴԻՄԵԼ կամ ԻՄԱՆԱԼ ԱՎԵԼԻՆ

...Եվ յուրաքանչյուրիս մեջ եղած մարդասիրության մասին

Այս տարի «Ավրորան» ներկա կլինի համաշխարհային կարեւոր հավաքների, այդ թվում՝ փետրվարին մենք կլինենք Մյունխենի անվտանգության համաժողովին եւ ապրիլին՝ «Սքոլ» համաշխարհային ֆորումին: Մեր առաքելությունն է վերականգնել «մարդասիրությունը» որպես համընդհանուր ինքնություն եւ պատասխանատվություն՝ տարածելով «Ավրորայի» հերոսների պատմությունները, ոգեշնչելով ապագա ակտիվիստներին իրենց առօրյա կյանքում:

Եթե դուք էլ եք այնտեղ լինելու, տեղեկացրեք մեզ: Ուրախ կլինենք շփվել ձեզ հետ տեղում:

Մարդասիրական համաշխարհային շրջանակն ընդլայնելու մեկ այլ փորձ է **«Երիտասարդական Ավրորան»**: Ուսանողական այս մրցույթի նպատակն է ոգեշնչել երիտասարդներին՝ մշակելու լուծումներ տեղական մարդասիրական խնդիրների համար: Մենք ուրախ ենք, որ արդեն 9 տարի համագործակցում ենք «Միացյալ աշխարհի քոլեջների» հետ՝ կրթելով եւ ձեւավորելով ապագա առաջնորդներին, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ կրում է «Ավրորայի» մարդասիրական ոգու մի մասնիկը:

Բացահայտեք այս տարվա մրցույթի եզրափակիչ փուլ հասած թիմերին եւ նրանց առաջարկած նախագծերին այստեղ:

Ծանոթացեք նոր սերնդի փոփոխության առաջամարտիկներին եւ նրանց տեսակետներին «Երիտասարդական Ավրորայի» քննարկմանը: Ուղիղ հեռարձակումը կլինի **2026 թ. փետրվարի 5-ին՝ հինգշաբթի, 20:00-ին**:

ԳՐԱՆՑՎԵՔ

Հարգանքով՝

Արմինե Աֆեյան
«Ավրորա» մարդասիրական նախաձեռնության ղեկավար

Մեր աշխատանքը կախված է ձեզանից

Ձեր աջակցությունն է հնարավորություն տալիս ընդլայնելու մեր ազդեցությունը: Յուրաքանչյուր նվիրատվություն օգնում է ամրապնդել մեր աջակցությունը համայնքներում աշխատող մարդասիրական գործիչներին եւ տեղական ջանքերով իրագործվող նախագծերին, ինչպես նաեւ ընդլայնել վստահության վրա հիմնված ֆինանսավորումը:

ՆՎԻՐԱԲԵՐԵՔ ԱՅՍՕՐ

Եթե բաց եք թողել. «Ավրորան»՝ լրահոսում

- «Ավրորայի» դափնեկիր **Թոմ Քաթինան** պատմում է, թե ինչպես է աշխատում աշխարհի ամենադաժան մարդասիրական ճգնաժամերից մեկի պայմաններում եւ ABC News-ի ռեպորտաժում ներկայացնում է իրավիճակը տեղում՝թե որքան դժվար է այսօր հիվանդանոցների աշխատանքը Սուդանում
- **Դոն Չիդլը** եւ «Ավրորա» մրցանակի Ընտրող հանձնաժողովի անդամ **Ջոն Փրենդերգասթը** պատմում են, թե ինչպես են մարդասիրական գործիչներն օգնում համայնքներին գոյատեւել Սուդանում՝ ամենաածանր պահին
- «Ավրորայի» համահիմնադիր **Նուբար Աֆեյանն** անդրադառնում է այն հարցին, թե ինչու է «ոչ մարդասերների» աճին զուգահեռ տեղական մարդասիրական ջանքերին աջակցելն առավել հրատապ դառնում

ԱՋԱԿՑԵՔ

AuroraHumanitarian.org

AuroraLuminaries.com